



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՈԳԱԲԱՐՉՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 21_Ա

18 հունվարի 2022 թվական

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՆԵՐԿԱՑԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ
ՁԵՎԱՎԵՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 18-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Ձևավորել աշխատանքային խումբ, որը կմասնակցի «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հաստիքացուցակի ու պաշտոնային դրույքաչափերի սկզբունքների որոշման վերաբերյալ քննարկումներին և հանդես կգա առաջարկություններով:
2. Աշխատանքային խումբը ստեղծել հետևյալ կազմով՝ Մխիթար Հայրապետյան, Դավիթ Ափոյան, Վարուժան Աթաբեկյան:
3. Լիազորել աշխատանքային խմբին մասնակցելու «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի ձևավորման սկզբունքների վերաբերյալ ռեկտորատի քննարկումներին, հանդես գալ առաջարկություններով, ապա դրանց վերաբերյալ հիմնավորումը ներկայացնել Հոգաբարձուների խորհրդին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Հոգաբարձուների խորհրդի հաջորդ նիստի օրը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Պապիկյան

2022թ. հունվարի 18
ք. Երևան